600.0383.07.12.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 դեկտեմբերի 2016 թվականի №383Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2016 թվականի հոկտեմբերի 18-ի №04-ԿՀ-02/4179 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքի մանկապարտեզի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու վերաբերյալ անհատական որոշում ընդունելու խնդրանքով՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքի գյուղապետարանի, «Իշխանահատակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (որը հանդիսանում է վճարող կողմ) և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ կողմեր) միջև ձեռք բերված փոխհամաձայնության վերաբերյալ համապատասխան հիմնավորումներ և, հիմք ընդունելով հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշման 1-ին կետով հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8-րդ կետը՝ հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքի մանկապարտեզի սպառման համակարգը՝
   1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական ցանցին (այսուհետ՝ էլեկտրական ցանց) միացվում է կողմերի միջև փոխհամաձայնեցված կարգով.

2) էլեկտրական ցանցին միացման վճարը հաշվարկվում է համաձայն հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» №659Ն որոշման.

3) էլեկտրական ցանցին միացման պայմանագիրը կնքվում է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում.

4) էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման օրվանից մինչև էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու առավելագույն ժամկետը սահմանվում է հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.5-րդ կետի համաձայն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ.ՆԱՋԱՐՅԱՆ

ք. Երևան
7 դեկտեմբերի 2016թ.
ժամը 16[00]